ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄԻԱՄՆՈՒԹՅԱՆ ՊԱՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Սեպտեմբերի 23-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Քրիստոնեական Միասնության Պապական խորհրդի նախագահ Նորին Սրբազնություն կարդինալ Կուրտ Կոխին՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանի:

Ողջունելով կարդինալ Կոխի ներկայությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Ամենայն Հայոց Հայրապետը բարձր գնահատեց Հայ Առաքելական եւ Կաթոլիկ Եկեղեցիների միջեւ առկա եղբայրական հարաբերություններն ու համագործակցության ոգին: Նորին Սրբությունը նշեց, որ նման այցելությունները ոչ միայն ուրախություն են բերում հայ ժողովրդի զավակներին, այլեւ զորացնում նրանց հավատքը, քանի որ հավատացյալ հայորդիներն ականատես են լինում սիրո այն ջերմ մթնոլորտին, որ առկա է երկու Եկեղեցիների միջեւ:

Իր հերթին կարդինալ Կոխը շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին Հայաստան այցելելու հրավերի եւ ջերմ բարեմաղթանքների համար՝ ուրախությամբ նշելով, որ իր համար մեծ պատիվ է գտնվել մի երկրում, որտեղ քրիստոնեությունն առաջինն է ընդունվել որպես պետական կրոն, որն ունի քրիստոնեական խորը արմատներ ու հարուստ մշակույթ եւ որտեղ ժողովուրդը, հակառակ բազմաթիվ փորձությունների ու զրկանքների, մինչեւ այսօր անսասան պահպանել է քրիստոնեության հանդեպ իր հավատարմությունը:

Զրույցի ժամանակ անդրադարձ կատարվեց խորհրդային վարչակարգի տարիներին Հայոց Եկեղեցու առջեւ ծառացած դժվարություններին ու խոչընդոտներին, անկախ պետականության պայմաններում հոգեւոր կյանքի զարթոնքին եւ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու առաջնութացին ու արձանագրած ձեռքբերումներին: Նորին Սրբությունը կարդինալ Կոխին ներկայացրեց նաեւ Մայր Աթոռի կողմից իրականացվող ծրագրերը տարբեր ոլորտներում՝ գոհունակությամբ ընդգծելով, որ Կաթոլիկ Քույր Եկեղեցու աջակցությամբ Մայր Աթոռի մի շարք միաբաններ իրենց հոգեւոր կրթությունը շարունակել են տարբեր երկրների կաթոլիկ բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Հանդիպմանը ներկա էին ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը, Մայր Աթոռի պաշտոնական մամուլի բաժնի տնօրեն Տ. Շահե աբեղա Անանյանը, Ծիսական հայեցակարգային գրասենյակի պատասխանատու Տ. Զաքարիա աբեղա Բաղումյանը, Անդրկովկասում պապական նվիրակ Մարեկ արքեպիսկոպոս Սոլչինսկին, Քրիստոնեության Միասնության Աջակցության պապա-

կան խորհրդի քարտուղար Հայր Գաբրիել Քուիկը եւ պապական նվիրակի օգնական Հայր Մանա Ժոզեֆ Մարամերեդդին:

Հանդիպումից հետո կարդինալ Կուրտ Կոխի գլխավորած պապվիրակությունը Մայր Տաճարում մասնակցեց Ս. Պատարագի արարողությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Սեպտեմբերի 23-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայ օգնության ֆոնդի անդամներին՝ ուղեկցությամբ ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանի:

Հանդիպման սկզբում Խաժակ Սրբազանը, շնորհակալություն հայտնելով Ամենայն Հայոց Հայրապետին ընդունելության համար, Նորին Սրբությանը ներկայացրեց ՀՕՖ-ի կողմից առաջիկայում իրականացվելիք ծրագրերը: Սրբազան Հայրը տեղեկացրեց, որ սեպտեմբերի 22-ի ժողովում կազմակերպության ներկայացուցիչները որոշում են կայացրել՝ շարունակել ակտիվ կերպով ծրագրեր իրականացնել Հայրենիքում՝ այսուհետեւ մասնավոր ուշադրություն դարձնելով դաստիարակչական ծրագրերին, կարիքավորների օժանդակության հարցերին եւ երկրի տնտեսության զարգացմանն ուղղված ձեռնարկներին:

Ողջունելով ՀՕՖ-ի անդամների այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայրապետական իր օրհնությունն ու գնահատանքը բերեց նրանց այն օգտաշատ աշխատանքների համար, որ կազմակերպության ներկայացուցիչների համատեղ ջանքերով իրականացվում են Հայրենիքում: Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց նաեւ, որ իր նախաձեռնություններով ու աշխատանքների ընդգրկուն ծավալով ՀՕՖ-ն առաջին կազմակերպություններից էր, որ Հայրենիքի անկախության շրջանից սկսած մեծ ներդրում ունեցավ Հայաստանի զարգացման ու շենացման գործում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց Հայ Եկեղեցու հովանու ներքո գործող ֆոնդի անդամներին՝ շարունակել իրենց աշխատանքներով կարեւոր օժանդակություն բերել Հայրենի երկրին եւ նպաստել Հայոց Եկեղեցու զորացմանն ու առաջընթացին: Վեհափառ Հայրապետը նաեւ իր գնահատանքը հայտնեց ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմի թեմական խորհրդին եւ առաջնորդ Սրբազան Հորը՝ թեմական կյանքն արդյունավետ կազմակերպելու եւ նոր ձեռքբերումներ արձանագրելու համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ